ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/268

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Մասնակից՝ «Ասատրյանս» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Մասնակցությամբ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ՝ Գ. Մաթևոսյանի, Ա. Ղարիբջանյանի,

«Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ասատրյանի, ներկայացուցիչ՝ Ա. Թորոսյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Վարոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցում, մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17554-2020 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.11.2020թ. թիվ 09/15158-2020 գրության հիման վրա, 30.11.2020թ.-ին «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 30.11.2020թ.-ին:

30.11.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/268 համարի ծածկագիրը:

02.12.2020թ.-ին Մասնակցի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 03.12.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/17944-2020 գրությամբ՝ ընթացակարգի քննությանը որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը և 03.12.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/17949-2020 գրությամբ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

08.12.2020թ.-ին, 17.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 25.11.2020թ. թիվ 09/15158-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հայտարարված ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակիցը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ասատրյանս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 17.12.2020թ.-ին թիվ 09.27.45/16372-2020 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ներկայացնում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) դիրքորոշումը «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ՍՅ-ԼՕ-2020/268 ծածկագրով ընթացա¬կարգի դիրքորոշման վերաբերյալ:

Ուսումնասիրելով ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով Մասնագիտական կազմա-կերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի դիրքորոշումը, հայտնում ենք, որ Պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի նախագիծը չի պարունակել այնպիսի էական պայմաններ, որոնք նախատեսված չեն եղել նախապես հայտարարված գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով:

Հրավերով սահմանված պայմանագրի տեխնիկական բնութագրի և ս.թ. հոկտեմբերի 19-ին Պատվիրատուի կողմից ընտրված մասնակցին ուղարկված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրի բովանդակության մեջ անհամապատասխանություն լինել չէր կարող, քանի որ պայմանագրի նախագծի անբաժանելի մաս համարվող տեխնիկական բնութագրի 2-րդ գլխով հստակ սահմանված էր, որ ներքին աուդիտի ենթակա միջավայրը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, որի կառուցվածքը սահմանված էր ՀՀ Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ, իսկ Պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի նախագծում, պարզապես, մանրամասնվել էր հիշյալ տեղեկատվությունը:

Հարկ ենք համարում նշել, որ անհեթեթություն է նաև Պատվիրատուին մեղադրել իր ենթակայության տակ գտնվող աուդիտի ենթակա միավորների քանակների չնվազեցման մեջ, քանի որ Պատվիրատուն իր գնման ընթացակարգը կազմակերպելիս նպատակ է հետապնդել ներքին աուդիտ իրականացնել կազմակերպության ամբողջ համակարգը, որը հստակ ամրագրված է ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ գլխում:

Այլ բան է, թե ինչու՞ Մասնակիցը ուշադիր չի ուսումնասիրել տեխնիկական բնութագիրը և լիարժեք ոռումնասիրության արդյունքում ռեալ գին ներկայացրել կատարվելիք աշխատանքների համար, կամ սխալ ըմբռնման դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի համաձայն գրավոր պարզաբանում պահանջել կամ էլ առաջնորդվելով՝ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պաշտոնապես բողոքարկել հրավերը և հայտնել իր անհամաձայնությունը առկա պայմանների վերաբերյալ: Հայտնում ենք, որ ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է, հիմք ընդունելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը օրենքով սահմանված կարգով կարող է կերվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Կերված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնրելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Վերոհիշյալ դրույթի վրա հղումը ամրագրված է հրավերի առաջին էջում, վճարման ժամանակացույցում, ինչպես նաև Հրավերի հավելված 6-ի 7.15 կետում:

Ներկայացնելով մեր դիրքորոշումը՝ պնդում ենք, որ ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) ամրագրված և պայմանագիր

կնքելու առաջարկի մեջ ընդգրկված պայմանագրի նախագծի պայմանների միջև անհամապատասխանություն առկա չէի եղել:

Ինչ վերաբերում է «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից մատնանշվածին, որ Հրավերի համապատասխան հավելված 1-ով ծառայության մատուցման ժամանակահատվածը սահմանվել է 4-րդ եռամսյակ, իսկ վճարումը 2020թ. և վճարման ժամանակացույցում նշված է, որ Վճարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կերման հիման վրա՝ վճարման ժամանակացույցին համապատասխան. ակնհայտ է, որ Պատվիրատի կողմից ԳՀ ընթացակարգը հայտարարել է՝ հիմք ընդունելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:

Ամփոփելով վերոհիշյալը՝ պնդում ենք, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով պայմանով գնում իրականացնելու դեպքում, ծառայության մատակարարման ժամկետի այլ ընկալում, քան այն ժամկետը, որը սահմանված է Հրավերում առկա տեխնիկական բնութագրի 6-րդ գլխի առաջին պարբերությամբ՝ առնվազն 24 ամիս, բացառվում է:

Միանգամայն անհիմն է նաև «Ասատրյանս» ՍՊԸ-ի այն մեղադրանքը, որ Պատվիրատուի անունից հանդես եկող պետական մարմնի գործողությունները կրում են միտումնավոր բնույթ, ուղղված են ընկերության գործունեության դադարեցմանը նպաստելուն, ինչպես նաև տվյալ գնման առարկային վերաբերվող ծառայությունները իր հետ փոխկապակցված այլ սուբյեկտին պատվիրակելուն:

Հայտնում ենք, որ ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի միակ մասնակիցը եղել է «Ասատրյանս» ՍՊԸ-ն, ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի դրույթներին համապատասխան և տվյալ դեպքում կողմնապահության մասին նույնիսկ խոսք լինել չէր կարող:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից 24.11.2020թ. գնումների տեղեկագրում ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60 ծածկագրով ընթացակարգի չկայացած լինելու հայտարարության հրապարակմանը, տեղեկացնում ենք, որ հրապարակումն իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.11.2020թ. ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 որոշումը, որը ուժի մեջ է մտել այն տեղեկագրում հրապարակվելուց հետո հաջորդ օրը:»:

3. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17554-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուի միջնորդությամբ 30.11.2020թ. թիվ 26/26-1/17554-2020 գրությամբ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին (Նախկինում «Ասատրյանս» ՍՊԸ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընթացակարգը 30.11.2020թ.-ին ընդունվել է վարույթ թիվ ՍՅ-ԼՕ-2020/268 ծածկագրին համապատասխան:

Ուսումնասիրելով նախաձեռնված ընթացակարգի հիմքում ընկած փաստերը գտնում ենք, որ այն ենթակա է մերժման «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն (Նախկինում «Ասատրյանս» ՍՊԸ) դրսևորել է իրեն որպես բարեխիղճ տնտեսվարող և չի հրաժարվել Պատվիրատուի հետ պետական պայմանագիր կնքելու իր պարտավորությունից, որի հիմքով հարուցվել և քննվում է սույն նախաձեռնությունը:

Պատվիրատուի ներկայացված պայմանագրի նախագիծը պարունակել է այնպիսի էական պայմաններ, որոնք նախատեսված չեն եղել նախապես հայտարարված տվյալ գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով:

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի (Նախկինում «Ասատրյանս» ՍՊԸ) տնօրենի կողմից Պատվիրատուի ներկայացրած այդպիսի պայմաններով պայմանագրի ստորագրումը Ընկերության համար կառաջացներ զգալի ֆինանսական կորուստներ, ինչպես նաև կհանգեցներ տվյալ ծառայության ոչ արդյունավետ մատուցմանը:

Պատվիրատուի կողմից փոփոխված Հրավերով նախապես հաստատված պայմանագրի նախագծի պայմանները չէին կարող ընդունելի համարվել որևիցե բարեխիղճ տնտեսվարողի համար այդ թվում նաև «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի (Նախկինում «Ասատրյանս» ՍՊԸ), ով ձգտում է նվազագույն շահույթի դիմաց, հանրային միջոցները տնտեսելու հաշվին, ապահովել ծառայության որակի և արդյունավետության բարձր մակարդակ ստեղծելով պետության համար հավելյալ արժեք: «Քրոու ընդ Ասատրյանս»

ՍՊԸ-ն առաջատարներից է ներքին աուդիտի ծառայությունների մատուցման ոլորտում ի հաշիվ իր կողմից ներքին աուդիտի ծառայությունների մատուցման համար կազմակերպված պետական գնումների մրցույթներին մասնակցության նպատակով առաջարկած անհամեմատ ցածր գնային առաջարկների: «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ կարևոր դեր է կատարում այս ոլորտում շուկայի զարգացման և ոչ բարեխիղճ գնային քաղաքականության զսպման ապահովման տեսանկյունից: Բազմաթիվ են այդպիսի օրինակները, որոնք կարող են ներկայացվել սույն նախաձեռնության քննարկման ժամանակ:

Հետևաբար Ընկերությունը չի հրաժարվել Հրավերով ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված պարտավորությունների կատարումից, նա հրաժարվել է այն պայմանագրի պայմանները ընդունելուց, որոնք հետագայում անկասկած կառաջացներ Ընկերության կողմից մատուցված ծառայության որակի նվազմանը, ինչն էլ իր հերթին կվնասեր Ընկերության բարի համբավը և դուրս կմղեր իրեն տնտեսական մրցակցությունից:

Պատվիրատուի կողմից առաջարկված իր կողմից հարմար պայմաններով պայմանագրի կնքման արդյունքում, Ընկերությունը կկրեր ֆինանսական վնասներ, որն իր հերթին կհանգեցներ նաև աշխատատեղերի նվազմանը այդ թվում հնարավոր գործունեության դադարեցմանը:

Ընկերությունը ունի հիմքեր ենթադրելու, որ Պատվիրատուի անունից հանդես եկող պետական մարմնի գործողությունները կրում են միտումնավոր բնույթ, ուղղված են Ընկերության գործունեության դադարեցմանը նպաստելուն, ինչպես նաև տվյալ գնման առարկային վերաբերվող ծառայությունները իր հետ փոխկապակցված այլ սուբյեկտին պատվիրակելուն:

Հաշվի առնելով նշվածը, Ընկերության գործադիր ղեկավարի կողմից առաջարկվել է Պատվիրատուին բանակցել աուդիտի ենթակա միավորների թվաքանակի նվազման և դրանց կատարման ժամկետների վերաբերյալ, քանի որ ակնհայտ է, որ պատերազմական և համաճարակի պայմաններում պայմանագրային հարաբերությունները չի կարող ամբողջական և արդյունավետ գործել և մինչև սույն տարվա ավարտը Պատվիրատուի կողմից նախանշված ամբողջ աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական աշխատանքների իրականացումը անիրատեսական է /Պատվիրատուի կողմից նախանշված աուդիտի ենթակա միավորների թվաքանակի և աշխատանքային ծավալի ուսումնասիրումը նույնպես հիմքեր են տալիս ենթադրելու, որ Պատվիրատուն իրականացնում է միտումնավոր գործողություններ առաջադրելով այնպիսի պայմաններ, որոնք Ընկերության համար անիրագործելի են:

Ընկերությանը Պատվիրատուի կողմից ստացված պայմանագրի նախագծի ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են այնպիսի էական անհամապատասխանություններ, որոնք առկա չեն եղել Ընթացակարգի հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի և կնքվելիք պայմանագրի նախագծի միջև:

Մասնավորապես Հրավերով նախատեսված պայմանագրի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամանակահատվածը հստակ սահմանվել է 4-րդ եռամսյակ, որով պայմանավորված N 2 հավելվածով նախատեսվել է, որ ծառայության դիմաց վճարումները իրականացվելու են 2020 թվականի ընթացքում: Սակայն Պատվիրատուին ներկայացված առաջարկությամբ պայմանագրի նախագծի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետի սյունակում նշված է, որ ծառայության մատուցումն իրականացվելու է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, իսկ ծառայության մատուցման ժամկետը սահմանվել է հավելված 1.1-ով: Սակայն հրավերով նախատեսված չի եղել N 1.1 հավելված, որը ներկայացվել է Ընկերությանը պայմանագիր կնքելու մասին առաջարկությամբ, ինչը փոխում է հայտարարված մրցույթի ողջ էությունը սահմանելով Ընկերության համար լրացուցիչ պայմաններ և պարտավորություններ: Հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով նախատեսված է եղել ընդամենը, որ ծառայության տեխնիկական բնութագրի մանրամասները սահմանված է հավելված 1-ով, որը վերաբերվել է միայն մատուցվող ծառայության տեխնիկական բնութագրին, այլ ոչ մատուցման ժամկետին, որը հստակ սահմանվել է նույն հավելվածով:

Բացի այդ ըստ հրավերով հիշատակված հավելվածի Պատվիրատուի կողմից պետք էր լրացված լիներ նույն հավելվածի 9-րդ բաժնով պատվիրատուի կողմից լրացման ենթակա աղյուսակը, որը նախքան պայմանագրի նախագծի ներկայացումը լրացված չի եղել Պատվիրատուի կողմից: Սույն հավելվածի 8-րդ բաժնի 8-րդ կետով հստակ սահմանված է, որ Հրավերով կարող է սահմանվել նաև, որ մասնակիցը գնային առաջարկին կից ներկայացնի ծառայության մատուցման առանձին տարրերի միավոր գները, որը ըստ էության փաստացի հրավերով այդպիսի պահանջ ներկայացված չի եղել, քանի որ նախանշված աղյուսակով պատվիրատուի կողմից լրացված չի եղել ծառայության մատուցման առանձին տարրերի միավորները:

Նույն հավելվածի 3-րդ բաժնի 2-րդ կետով հստակ սահմանվել է, որ Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Ղեկավարի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա կազմի ներքին աուդիտի երեք տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը հիմք ընդունելով կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները (ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները), հստակ նշելով ներքին աուդիտի ենթակա Միավորների քանակը, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտների ժամկետները (հաճախականությունը), ելնելով առկա ռեսուրսներից աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները, որն էլ ելակետային հիմք կդառնա ռազմավարական ծրագրում ընդգրկված հաջորդող տարիների համար ներքին աուդիտի ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնման ընթացակարգին գնային առաջարկի ներկայացման համար.

Այսինքն վերոնշյալով ներկայացված մեջբերումների համակարգային վերլուծությունից բխում է, որ Պատվիրատուն իրավունք ուներ հրավերով ինքը լրացներ աուդիտի ենթակա միավորների տարրերը և սահմանել, որ մասնակիցները ներկայացնեին գնային առաջարկին կից ծառայության մատուցման առանձին տարրերի միավոր գները, իսկ այդպիսի գործողության բացակայության պարագայում ըստ էության Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ծառություն մատուցողն է կրում տվյալ պարտականությունը կազմել աուդիտի ենթակա միավորների տարրերը հաշվի առնելով կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները, ներքին աուդիտի ենթակա միավորների քանակը, ինչպես նաև աուդիտի ենթակա ոլորտները և աուդիտների ժամկետները (հաճախականությունը) ելնելով առկա ռեսուրսներից աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար:

Հավելվածի 2-րդ բաժնով սահմանված է եղել, որ Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, որը ընդգրկում է կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի

կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները, որը կատարողը օբյեկտիվորեն հնարավորություն էր ստանում ձեռնարկել միայն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հիմք ընդունելով կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները:

Ներքին աուդիտի ենթակա միավորների սահմանման և տարեկան ծրագրի կազմման ընթացակարգը և առանձնահատկությունները սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի 2-րդ բաժնով; Մասնավորապես պետք է նկատել տվյալ ընթացակարգերից, որ <<կազմակերպության ամբողջ համակարգ>> և <<աուդիտի ենթակա միավորներ>> հասկացությունները տարբերվող բնույթի են: Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրից (կազմակերպության ամբողջ համակարգից) ներքին աուդիտի ծառայությունը իրականացնում է 2-րդ բաժնով սահմանված գործընթացները, որն իրականացնելով միայն կազմվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը:

Վերոնշյալի հետ կապված Ընկերությունը 21.10.2020թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել գրություն արձանագրության և առաջարակության տեսքով, որտեղ նշվել են արձանագրված անհամապատասխանությունները (հակասությունները Ընթացակարգի հրավերի և պայմանագրի նախագծի միջև) և գնահատող հանձնաժողովին խնդրել Ընկերությանը ներկայացված պայմանագրի նախագիծը համապատասխանեցնել հրավերով ներկայացված պայմանագրի նախագծին և կրկին ուղղարկել Ընկերությանը:

03.11.2020թ.-ին Պատվիրատուի կողմից ուղարկված պատասխան գրությամբ ըստ էությամբ մերժվել է Ընկերության ներկայացված առաջարկը նշելով, որ Հրավերով ամրագրված և պայմանագիր կնքելու առաջարկի մեջ ընդգրկված պայմանագրի նախագծի պայմանների միջև անհամապատասխանություններ առկա չեն և առաջարկվել է Ընկերությանը նույն պայմաններով (փաստացի հրավերով սահմանված պայմանագրի նախագծին հակասող պայմաններով) կնքել պայմանագիր:

Տվյալ պարագայում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից ներկայացրած առաջարկությունը չի ունեցել վերջնաժամկետ, իսկ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը գտնվել է ժամանակավոր անաշխատունակության կարգավիճակում և իրականացրել ներքոնշյալ գործողությունները:

Այնուհետև Ընկերության տնօրենը գտնելով, որ Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծով ամրագրված այլ պայմաններով կազմված պայմանագրի հաստատումը, որը առաջարկում է Պատվիրատուն, Ընկերության գործունեության համար

կառաջացնի էական վնաս և կհանգեցի նաև աշխատատեղերի նվազմանը այդ թվում հնարավոր գործունեության դադարեցմանը, իսկ պետության համար տնտեսական առաջարկվել է Պատվիրատուին բանակցել աուդիտի ենթակա միավորների թվաքանակի նվազման և դրանց կատարման ժամկետների վերաբերյալ, քանի որ ակնհայտ է, որ պատերազմական և համաճարակի պայմաններում պայմանագրային հարաբերությունները չի կարող ամբողջական և արդյունավետ գործել և մինչև սույն տարվա ավարտը Պատվիրատուի կողմից նախանշված ամբողջ աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական աշխատանքների իրականացումը անիրատեսական է:

Արդյունքում Պատվիրատուն 24.11.2020թ. գնումների տեղեկագրում հրապարակել է հայտարարություն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը կնքելուց հրաժարվելու պատճառաբանությամբ:

Պետք է նաև ուշադրության արժանացնել այն, որ վեճի առարկան հանդիսանում է ոչ թե ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում բողոքաբերը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, այլ Ընկերության ներկայացված պայմանագրի նախագծին:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուրն իրավունք ունի իր տնտեսական գործունեությունն իրականացնել ազատ և որևէ սուբյեկտ իրավունք չունի իրեն նախընտրելի պայմաններով ստիպել պայմանագրային հարաբերությունների հաստատում:

Ընկերության կողմից ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմանների վերաբերյալ անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, որպիսի հիմքով Ընկերությունը մինչև հայտերի բացումը չի դիմել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Ընկերության կողմից հարցի բարձրացման խնդրո առարկան վերաբերվում է միայն Պատվիրատուի կողմից Ընկերությանը ներկայացված Պայմանագրի նախագծին, որով նախատեսված պայմանները էականորեն տարբերվել են հրավերով նախապես նախատեսված պայմանագրի նախագծից:

Այսինքն Ընկերությունը օբյեկտիվորեն չէր կարող ծանոթ լինել պայմանագրի այն նախագծին, որը ներկայացրել է իրենց Պատվիրատուն, քանի որ Ընկերությունը Պատվիրատուի ներկայացված պայմանագրի նախագծի հետ ծանոթացել է տվյալ գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերժնաժամկետից հետո, երբ Պատվիրատուն Ընկերությանը ներկայացրել է Պայմանագրի նախագիծը առաջարկելով այն ստորագրել, ուստի վեճի առարկան վերաբերվել է Պատվիրատուի կողմից Ընկերության հաստատմանն

ներկայացրած պայմանագրի պայմաններին, այլ ոչ ընթացակարգի հրավերի և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին:»:

Հաշվի առնելով ներկայացվածը, Մասնակիցը գտել է, որ «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտարարությունը գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին Ընկերության կողմից պայմանագրի կնքումից հրաժարվելու պատճառաբանությամբ հիմնավոր չէ, որի պարագայում «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռված ընթացակարգը ենթակա է մերժման:

4. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 02.12.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 03.12.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/17944-2020 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Ծառայության ներկայացուցիչը, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին, նախաձեռնված ընթացակարգի իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 02.12.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 03.12.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/17949-2020 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (այսուհետ նաև՝ Գրասենյակ):

Գրասենյակը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Գրասենյակի ներկայացուցիչը, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին, նախաձեռնված ընթացակարգի իրավական և փաստական հանգամանքներին:

6. <u>ՍՑ-LO-2020/268 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով 25.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 02.10.2020թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) Հավելված 6-ով՝ պետության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) մատուցման պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ կերպ՝ «Մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ (ներքին աուդիտ) բնութագիրը կցվում է (հավելված 1)»:

v. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) բնութագրով՝ Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանվել է ներքին աուդիտի ենթակա

միջավայրը, համաձայն որի՝ Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, ընդգրկում կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները՝ (Գործառույթը կամ գործընթացը կազմակերպության նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է):

vi. Հավելված 1-ի 6-րդ կետով սահմանվել է ծառայության ընդունման և վճարման ժամանակացույցը, համաձայն որի՝ կնքվելիք պայմանագրով ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է առնվազն 24 ամիս, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

vii. Նույն Հավելված 1-ի 9-րդ կետով սահմանվել է պատվիրատուի կողմից լրացման ենթակա աղյուսակ, հետևյալ կերպ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ				
Ներքին աուդիտի ենթակա Միավորներ		Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի ենթակա Միավորներ		
Անվանում	Հասցե	Անվանում	Հասցե	Ռիսկային խումբը

viii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

ix. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.10.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված/հաղթող մասնակից:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որոշել է հաղթող մասնակցի հետ կնքել պայմանագիր, ինչպես նաև հիմք ընդունելով նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, որոշել է անգործության ժամկետ չսահմանել:

xi. Հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում 13.10.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի)

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

xii. www.gnumner.am կայքում 24.11.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացած լինելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ ընտրված մասնակիցը հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետը:

7. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17554-2020 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով 25.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ասատրյանս» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 07.10.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է հաղթող մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սակայն 24.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ներքին աուդիտի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացած լինելու մասին հայտարարությամբ, արձանագրվել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը՝ հրաժարվելով պայմանագիր կնքելուց:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը

կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի՝ գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Հրավերի Հավելված 1-ի 9-րդ կետով պատվիրատուի կողմից չեն սահմանվել ներքին աուդիտի ենթակա միավորներն ու դրանց հաշվետու ժամանակաշրջանը, որն ենթակա էր լրացման: Ընդ որում, ոչ թե պայմանագրի նախագիծը Մասնակցին ուղարկելու ժամանակ, այլ՝ գնման ընթացակարգի հրավերով:

Վերոգրյալերը համադրելով գործում առկա փաստերին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը՝ Հավելված 1-ի 9-րդ կետում առկա աղյուսակի լրացված չլինելը:

Հատկանշական է, որ ՀՀ ֆինանսների նախարարի՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին 15.07.2020թ.-ին ընդունված թիվ 204-Լ հրամանով սահմանվել է նաև, որ հաստատված պահանջներն ունեն **բացառապես կողմնորոշիչ բնույթ և պատվիրատուների կողմից ենթակա են համապատասխանեցման տվյալ կազմակերպության կարիքի առանձնահատկություններին**: Սակայն «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն նույնությամբ և բառացիորեն արտացոլում է նշված հրամանով հաստատված պահանջները: Այսինքն՝ պարունակում է ընդհանրական դրույթներ, որոնք ենթակա էին համապատասխանեցման և մանրամասնեցման գնման ընթացակարգի հրավերով և տեխնիկական բնութագրով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին

հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում «ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-20/60» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի 9-րդ կետի աղյուսակում լրացման ենթակա տեղեկատվության բացակայության հանգամանքը հանգեցրել և նպաստել է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարմանը, որպիսի պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17554-2020 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/268 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**